



Հ. Ա. ԱՆԱՍՅԱՆ

«ԱՐՄԱՏ ՀԱԻՍՏՈՅ»-Ի ԱՂԲՅՈՒՐԵՐԻՑ*

ԻՐԵՆԵՌՈՍ ԼՈՒԳՈՂՈՍԱՑԻ

Մեր թվականության Բ դարի եկեղեցական մատունագիրներից է այս հեղինակը, որի կենագրությանը վերաբերող տեղեկությունները սպակ են պատմական աղբյուրներում։ Ծննդով նա Փօքր Ասիայից էր, ազգությամբ՝ հույն, աշակերտել էր Պողիկարպոս Զմյուռնացուն. Մի ժամանակ, Մարկոս Ավրելիոս կայսեր օրերին, երես էր Լուգորնում (Ֆրանսիայի այժմյան Լիոն քաղաքը), իսկ 177/78 թվականին դարձել է նույն քաղաքի եպիսկոպոսը և այնուհեց էլ ժառանգել Լոգորնացի մականունը². Մա-

հացել է Սեպտիմոս-Անդրոսի հալածանքների ժամանակ, 203 թվականին։

Խնայես հունական և հոռոմեական եկեղեցիների, այնպէս էլ հայ եկեղեցու համար Դրենեոսը հեղինակություն է համարվել քրիստոնեության վաղագույն շրջանում գոյություն ունեցած վարդապետական տարակարծությունների հարցերում և կարևոր աղբյուր՝ հերձվածողական ու հերձափոխական շարժուների պատմության համար։ Նա գրել է բազմաթիվ երկեր, որոնցից սահմանվել են միայն երկուսը՝ «Ընդդեմ հերձուածոց» և «Յոյցը առաքելական քարոզութեան»։

«Ընդդեմ հերձուածոց» երկը, որը բաղկացած է հինգ գրքերից, լրիվ կազմով հայտնի է միայն լատիներեն մի հին թարգմանությամբ³, որի ժամանակի մասին մաս-

Ասորերենում այս անունը կարդացվում է Լոգորն, Լոգորն, Լոգորն ձևերով։ Եվսեիս Կևարացու Եկեղեցական պատմության հայերեն հին թարգմանության մեջ այս անունը գրված է Լատինան ձևով, իսկ նոր թարգմանության մեջ՝ Լոգորն, բայ այն էլ Լատինանացի և Լոգորնացի. Անմո. «Եւրիփոսի Կևարացոյ Պատմութիսն եկեղեցւոյ լողեալ յատրուց ի հայ ի հինգերորդ դարու», Վանետիկ, 1877, էջ 321, 322, 350, 351, 354։

«Արմատ հասատոյ»-ի ձևագիր օրինակներում Երեսուն անվանված ձևերով անվանվում է և պիսկոպոս Լոկոնոց՝ Լոկանայ՝ Լոկոնոց՝ Լոկոնա»՝ Լոկոնոց։

* „Sancti Irenaei Contra Haereses libri V... stu-

¹ Հմմա. B. Altaner, „Précis de patrologie“ (adapté par H. Chirat), Tournai, 1961, p. 209–213.

² Լիոն քաղաքի հին անունը ստվրաբար հայտնի է Լոգորն ձևով՝ ըստ լատինականի և հունականի (կրթատեղ ենք վերջապրությունները), բայց հունարենում պատահում է նաև Լոգորն ձևով։

նագետների կարծիքները տարբերվում են՝ դեկտ 200 թվականից մինչև 420 թվական։ Նրա հունարեն բնագրից մնացել են միայն բազմաթիվ հատվածներ՝ հատաքաղաքների հեղինակների գործերում։ «Ընդդեմ հերձուածոց»-ի Դ և Ե գրքերի հայերեն մի հին թարգմանությունը հայտնաբերվելոց էջմանին միաբանության անդամ Կարսական եպս։ Տեր-Մկրտչյանի կողմից՝ Երևանի կաթողիկե և հատվածածին եկեղեցու ձեռագրերից մեկում (այժմ Երևանի Մաշտոցյան Մատենադարական ձեռ. № 3710) և 1910 թվականին հրատարակվեց Շուշի միաբանության անդամ Երվանդ Վրոցլավ Տեր-Միհնասյանի ջանքերով⁴։

«Ցոյցը առաքելական թարգութեաւն» երկը ճանորդ է միայն հայերեն թարգմանությամբ, որը հայտնաբերվել է նոյնակա վերիշյալ ձեռագրում՝ Տեր-Մկրտչյանի և Տեր-Միհնասյանի կողմից և հրատարակվել 1907 թվականին։ Նրա հունարեն բնագրը և կամ նրամից կատարված թարգմանությունները ուրիշ լեզուներով՝ առհասարակ հայտնի չեն բանափրությանը։

Համարելով, որ Իրենենու երկերի հայերեն թարգմանությունները ժանորդ են եղել Սուտիանու Սյունեցուն, հրատարակիչները հայկած են եղել թարգմանության ժամանակը դեմքու ոչ ոչ, քան Ը դարի առաջին կեսին, Ալասի ունենալով, որ Սյունեցին մահացել է 736 թվականին, իսկ թարգմանության լեզվում հշմարել էին թե՝ ասորելուն, թե՝ հունարեն սկզբանքի հետքեր։ Ըստ Հ. Ալիքինակի՝ անտարակություն է, որ թարգմանությունների սկզբանքիրը եղել է հունարեն։ Իսկ թարգմանությունը նա վե-

dio et labore Ren. Massuet*, Parisiis, 1710. Վերահանդիսարակել են՝ J. P. Migne («Patrologiae cursus completus», ser. gr., t. VII), A. Stieren & W. Harvey.

* „Irenaeus. Gegen die Häretiker.” Ελεύθερος καὶ ανατροπή τῆς φαῦλοτόπου γνώσεως. Band IV u. V. In armenischer Version entdeckt von Lic. Dr. Karapet Ter-Mekertschian, z. Z. Bischof in Tauris (Parsten), herausgegeben von Lic. Dr. Erwand Ter-Minassiantz* (Texte und Untersuchungen, XXXV 2), Leipzig, J. C. Hinrichs, 1910.

5 „Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung. Էկտ էնօնէն ու նուտունու ուրընթառ։ In armenischer Version entdeckt, herausgegeben und ins deutsche übersetzt von Lic. Dr. Karapet Ter-Mekertschian und Lic. Dr. Erwand Ter-Minassiantz. Mit einem Nachwort und Anmerkungen von Adolf Harnack* (Texte und Untersuchungen, XXXI 1), Leipzig, J. C. Hinrichs, 1907.

* Տես հրատարակիչների առաջարանները։

բագրել է Վրթանես Քերթողիմ՝ Զ դարի վերջին տասնամյակում, հնարավոր համարելով վերջին եզր ընդունել 604 թվականը, ցոյց տպով, որ Իրենենուից բավականին ուշագրավ հետքեր կամ Վրթանեսի սու Սորենի թղթում։ Գարեգին վրդ. Հովսեականը համարում էր, որ «քարգմանութիւնը կատարուած լինի հեղինակաւուների շրջանում, և դարում»⁵։

Հայ մատենագրության մեջ Իրենենուից կամ բազմաթիվ հատվածներ, որոնց մասը «Ընդդեմ հերձուածոց» և «Ցոյցը առաքելական թարգութեաւն» երկերից է, մի մասն էլ նրա որից այնպիսի երկերից, որոնք այժմ ծանոթ չեն։ Իրենան այդ հատվածներից պատեղ մեզ հետաքրքրում են նրանք, որոնք ընդգրկված են «Արման հասատոյ»-ում։

Որքան մեզ հայտնի է՝ առաջին անգամՊ. Մարտենն է, որ հայսանիկիական հայութի մատենագրական հմտվածների շարքում 1883 թվականին հրատարակել է «Արման հասատոյ»-ում գտնվող հայերեն վեց հատվածները՝ բայ Փարիզի Ազգային Մատենադարական № 85 (այժման համարով՝ 153) ձեռագիր օրինակի⁶։ Այդ օրինակը, ինչպես այժմ ճշտված է, «Արման հասատոյ»-ի համապատ խմբագրության ներկայացուցիչներից է։

Որքանից մետք Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը 1897 թվականին հրատարակել է «Արման հասատոյ»-ի իրենան հատվածները՝ բայ Էջմանին Մատենադարական Կար. № 1946 (այժման Երևանի Մաշտոցյան Մատենադարական № 1982) ձեռագրի⁷, բայց այնուղեա բերված էին Իրենենուից ոչ թե վեց, այլ միայն հինգ հատվածներ, իսկ վեցերորդը վիխակ էր նրատարակի ուղարկությունից։ Այս օրինակը, մեր զնանաւամբ, «Արման հասատոյ»-ի ընդարձակ խմբագրությանն է պատկանում։ Բայց հրատարակիչը չէր էլ կրամել, որ գործ ուներ «Արման հասատոյ» կոչված մի երկի մետք,

⁷ Հ. Կ. Ալիքինակ, «Ա. Իրենենու նայ մատենագրության մեջ», Հանդէս Ամսօրեայ, 1910, էջ 200—208։

⁸ Վերաբան, 1907, էջ 64։

⁹ J. P. Paulinus Martinus, „Analecta sacra patrum antenicaenorum”, հետեւյալ հրատարակությունը. J. B. Pitra, „Analecta sacra spicilegio Solesmenst parata”, t. IV, Parisiis, 1883, p. 34—35 (հայերեն բնագրեր), 304—305 (լատիներեն թարգմանություն)։

¹⁰ Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, «Իրենենու և հշմարենը նոր գրությունից», Վերաբան, 1897, էջ 203։

և միայն այն էր նշել, որ ժողովածուի կազմողն է «ոմն Վարդան»:

Ստուգեան Հ. Յորդանը փարիզյան վերոբիշյալ № 85 (=№ 153) և Էջմիածնի Սատենադարանի Կար. № 1500 (այժմյա՞ն Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 2080) ձեռքբերի հիման վրա 1913 թվականին նորից էր հրատարակել Պ. Մարտինի հրատարակած այն հատվածները, որոնք, ինչպես ասացին, «Արմատ հաւատոյ»-ի համար խմբագրությանն են պատկանում¹¹. այնուղեք Յորդանը բնագրական համեմատության կազմով նշել էր նաև տարրընթերցումները Տեր-Մկրտչյանի տված հրատարակության, առանց նկատելու, որ վերջինս «Արմատ հաւատոյ»-ի մի տարրեր խմբագրություն է ներկայացնում և այդ պատճառով զգալի շեղումներ է ցուց տալիս:

Հիշյալ հրատարակիչները չեն զրադվել խնդրու առարկա հատվածների բնագրական հարցերով, այլ միայն դրանց վրա և անագետների ուշադրությունն էին հրավիրել մատենագրական առումով, իրենեւուի անունով հայ մատենագրության մեջ պահանջված նշանակած հավաքերու հավաքելու նպատակով: Նրանցից միայն Յորդանը, մի քայլ առաջ գնալով, փորձել էր իր կազմած համեմատական աղյուսակում հիման կարգով ցուցումներ տալ, թե ո՞ր պետք է որոնել իրենյան այդ հատվածների կամ նրանց մասերի ծագումը, ըստ որում չորս հոդու տրվում էր դեպի «Ընդդիմ հերձ» երկը, մեկ հոդում՝ դեպի «Ճոյցք»-ը. իսկ երեք տեղեր մնում էին անպատասխան¹²: Ինչ խոսք, որ Յորդանի կատարած քայլը կարևոր էր, բայց նրա աշխատանքը բնագրաբանական բնույթը չէր կրում: Նրա ցուցմունքներով կարելի էր աղբյուրներում գրտել երբեմն բառացի նույնություններ, երբեմն՝ ընդհանուր հմանություններ. բայց թե ինչպիսի եղանակներով էին կերպարանափոխությունների ենթարկվել այդ աղբյուրները «Արմատ հաւատոյ»-ի մեջ մուծվելու համար, դա չէր երևում Յորդանի կատարած աշխատանքում:

Այժմ մենք ուզում ենք ձեռնամուխ լինել «Արմատ հաւատոյ»-ի իրենյան հատվածների բնագրաբանական հարցերին, քայլ առ

քայլ տեսնել, թե այդ հատվածների մասերն ու մասնիկներն ի՞նչ ճանապարհով և ինչպես են կազմավորվել ու ստացել այժմյան պատկերը: Այսպիսի աշխատանքը կարևոր է ոչ միայն «Արմատ հաւատոյ»-ի բնական հրատարակության համար՝ իր աղբյուրագիտական նշանակությամբ, այլև նրա համար, որ հնարավորություն կտա տեսնելու, թե բոլոր դեպքերում չէ, որ «Արմատ հաւատոյ»-ում Իրենեւուի անունով Շերկայացող հատվածները բառացիորեն երա գրչին են պատկանում: Մենք կտեսնեմք, որ դրանք երբեմն Իրենեւուի խուքերի ո՞չ թե բառացի մեջքերումն են, այլ մեկնարանումը, և ավելի հաճախ՝ խմբագրումն ու վերաշարադրումը: Այս հանգամանքը պիտի հաշվի առնեն Իրենեւուի մատենագրության հարցերով գրադպող մասնագետները:

«Արմատ հաւատոյ» ժողովածուի կազմող Վարդան Այգեկցին Իրենեւուից վկայություններ քաղելու գործում օգտվել է տարրեր տեղերից և, հավանաբար, տարրեր ժամանակներում: Այդ են վկայում հատվածներին տրված հեղինակային վերագրերը, մի մասը՝ «Երանուի հետևողի առաքելոց», մյուս մասը՝ «Երանուի կուգայ նախկինությունից»: Այսպես է թե՝ ընդարձակ, թե՝ համառոտ խմբագրություններում:

Մենք առիթ ենք ունեցել ցուց տալու, որ «Արմատ հաւատոյ»-ի ընդարձակ և համառոտ խմբագրություններն իրարից անկախաբար ծագում են հեղինակային հայության կամ բառացի բայց համառոտն ավելի նախական վիճակ է ներկայացնում, քան ընդարձակը, թեև վերջինս իր կառուցվածային կերպարանքով ավելի մոտ է նախօրինակից¹³: «Նշանակում էր՝ եթե համառոտում ավելի նախական վիճակով են պահպանվել մատենագրական վկայակոչումները, ապա ընդարձակում պահպանվել է նախօրինակի հիմնական կերպարանքը, ենթարկվելով վերջնական վերակառուցման, որն ըստ երևույթին տեղի է ունեցել ԺԳ դարի առաջին տարիներին, մինչև 1205 թվականը: Ծառ բնական է, որ վերակառուցման աշխատանքը որոշ չափով կազմեր մատենագրական վկայությունների վիճակի վրա՝ ինչ-ինչ հյութերի տեղափոխություններով և տեղափոխությունների առթած հետևանքներով: Այդ իրողությունը

¹¹ Hermann Jordan, „Armenische Irenaeusfragmente mit deutscher Übersetzung nach Dr. W. Lüdtke zum teil erstmalig herausgegeben und untersucht“ (Texte und Untersuchungen, XXXVI 3), Leipzig, J. C. Hinrichs, 1913, S. 22–24 (Հայութեան բնագրեր), 163–166 (գերմաներեն թարգմանություն).

¹² Ibidem, S. 162.

¹³ Հ. Ս. Անապան, «Հայ պատմա-դավանաբանական գրականության բանկարժեք նուշարանակը. Գիրք հաստատության և արմատ հաւատոյ», Էջմիածն (ամս.), 1972, № 8, էջ 30–32. № 9, էջ 45–46:

բացահայտվում է համեմատության դիմելով երկու խմբագրությունների համապատասխան հորթերը: Արդ՝ վերակառուցման աշխատանքներն անդրադարձել են նաև իրենցան հատվածների կառուցվածքի վրա: Նախկին վեց հատվածներից մասեր համապետով իրար են միացվել և որպես ինքնուրույն միավոր տեղափոխվել են ընդարձակ խմբագրության Ը զիմի մեջ, որը նվիրված է անապահանության հարցերին: Իսկ այս փոփոխության հետևածքով նախկին միավորներ և կամ որոշ մասեր—հատվածներ կամ կիսահատվածներ—տեղափոխվածների հետարկվելով մի տեղից դեպի մյուսը, կազմել են նոր միավորներ և տեղափոխվել Դ զիմի մեջ, որը ամփոփված են երկու քառորդությունների միասնության հարցին վերաբերող վկայությունները: Այսպիսով՝ միավորների բանակը թեև նոյնն է մնացել, բայց որոշ միավորների կազմը փոփոխությունների է ենթարկվել: Այս տեղաշարժերը նշգրտության նշելու համար մենք կիսահատվածների ենք վերածել ընդարձակ խմբագրության 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները: Մյուս հատվածները, որոնք չեն կիսվել, նոյնական ենթարկվել են տեղափոխությունների: Հաս այս՝ կունենակը հետևյալ համեմատական պատկերը (հավասարության նշանից առաջ՝ ընդարձակ խմբագրության միավորները, հետո՝ համառու խմբագրության):

1a = 1a,	1b = 3a,
2a = 2a,	2b = 2b,
3a = 3b;	Բացի այդ՝ որոշ հատվածներ կիսահատվածների վերածելն անհրաժեշտ է ըստ նաև բնագրական քննությունների համար, եթե պարզվում էր, որ հատվածի ծագումը երկու տարրեր տեղերից է:

Սուրբ մեր քննությունը գնում է ուստար-
ձակ խմբագրության հետևողությամբ (Ե-
րևանի Մաշտոցյան Մատենադարանի ձևո.
№ 3295): Համապատ խմբագրությունը վկա-
յակոչում ենք միայն անհրաժեշտության
դեպքերում (Եռվան Մատենադարանի ձևո.
№ 2080):

1. Երանուի մկնեառի առարկացն.

(a) Որք ներձնում և պատուեն զժին՝ զմորված պատուհան ընկալցին. (b) բանջի ընդունաց և սնութիր և որք երկու բնութիւն առնել բաժանեալ և ուրանան զՄատուցյ գիրկութիւնն, որը ի մարդունան խորու շնորհեաց մեա: Էս 342ա:

գալուստ բրու շամբառաց ապ. 1.2 34:2

ա կիսահաւաքածք բացախայս է Երե-
մենու ծանօթ երկերում, բայց «Անիք հա-
սասո՞յ»-ում կա՝ արագիս ընթերցուանվ.
«Որը ներձուն և բաժանեն զմի Քրիստո»

զՅորդումանու պատուհան կրեցին¹⁴: Դժվար է ասել՝ «Արմատ հասառոյ»-ի կազմողը «Կնիք հասառոյ»-ի¹⁵ է վերցրել այս հասլածը՝ խմբագրման ենթարկելով, թե այն աղբյուրից, որից օգտվել է և «Կնիք հասառոյ»-ն: Վերջինում այս հախաղաստրունքը նաև է կազմում հետևյալ ընդակ հասլածի: «Նորին Երանոսի՝ ի բանեն, որ ընդդեմ Կողարքոսի և Նորին համախոհ, որը ըստ անկատարելութեանն է ախտից յինքնարձութեան, և տրուել երկնշել Քրիստոսի»¹⁶: «Կնիք հասառոյ»-ում գտնվող իրենցան այս հասլածի ծագումն անհայտ են համարում Ցորդանը¹⁷ և Լըռենը:

¹⁴ «ԿԵԲԻ ԲԱԱԱՅՈՒ ԸՆԴԲԱԱՆՈՐ ՄԱՐՐ ԱԼԵՎԵԼԵՎՈՅ
ՅՈՒՂԴԱՓԱ և ՄԱՐՐ ԲՈՋԵԼԻԲԻ ԲԱՐԵՑ մերց ՊԱԱ-
ՅՈՒԹԵԱԱՆ, յաւրա Կոմիտաս կաբուլիկոսի ԲԱԱԱ-
ԲԱԱԱԲԱԱԿ: Հրատարակութիւն Կարավես Խափիկո-
ւսիս [Տե՛ր-Մկրտչևան]», Եջմիածին, 1914, էջ 297
առ. 18—20:

¹⁵ UGm, 19 297—299:

¹⁶ H. Jordan, S. 162 u. 203.

¹⁷ J. Lebon, "Les citations patristiques grecques du Sceau de la Foi", *Revue d'Histoire Ecclésiastique*, XXV, 1929, p. 23.

¹⁸ «Ծննդ. միքան», էջ 155 ս. 11—13:

¹² Ազատի է ցուց տպի և «Ընդ նկա»-ի լատիներեց բարգմանությունը. „qui universam dispositionem Dei contemnunt, et carnis salutem negant”, *աեւ* J. P. Migne, „Patr. curs. compl.”, ser. gr., t. VII, p. 1124.

դոնականներին հասցեագրելով, տպիս է՝ այսպիսի ձևակերպում. որք երկու բնութիւն ասեն բաժանեալ. իսկ դրամից հետո՝ բնագրի «զԱստուծոյ և զմարմնոյ փրկութիւն ուրանա» բառերը, որոնք բնականաբար աղավաղված երևոյթ ունեն և տրամաբանական միտք չեն արտահայտում, առ մեկնաբանության է ենթարկում՝ այսպես. և ուրանան զԱստուծոյ փրկութիւնն, զոր ի մարդանապն իրում շնորհեաց մեզ, այսինքն՝ «և ուրանում են այն փրկությունը, որ Աստված շնորհեց մեզ՝ իր մարդեղության միջոցով»: Թեև այս հնարքը որպես մեկնություն հինգյան հաջող է, բայց, այնու ամենալավի, չի արդարանում, բայց որ կառուցված է սխալ վերծանված բնագրի վրա: «Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրությունն այս կիսահատվածին համապատասխանող մասում չունի Ալգեկցու ավելացրած որք երկու բնութիւնն ասեն բաժանեալ բառերը:

2. Նորին՝ յետ սակաւուց.

(ա) Որ եկն և մի բնութիւն Աստուծոյ և մարդուն գործեաց, մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապականութեան. (բ) որ աներեւոյթն է ի մէնց՝ եղեւ տեսանելի, զի ըստ ամենայն մասին կցորդութիւն առցորդ զանապականութիւնն: Էջ 342ր:

Հ կիսահատվածի սկզբի որ եկն բառերը, որոնք իրենեւոյ համապատասխան բնագրում չկան, մեր կարծիքով ծագել են վերջինիս «եթէ ոչ էր նորա եկեալ առ մէզ» բառերից²⁰: «Արմատ հաւատոյ»-ից առաջ՝ այս իրողությանը հանդիպում ենք Գագիկ Արծրունու առ Ռոմանոս կալոր թղթում²¹, ավելի առաջ՝ Ստեփանոս Սյունեցու «Վասն անապականութեան մարմնոյն» երկում²² և դրամից էլ առաջ՝ «Կնիք հաւատոյ»-ում²³. Վերջինում՝ որ եկն բառերի փոխարեն գտնում ենք «ուրեմն» բառը, բայց կարելի է անտարակուսելի համարել, որ «Կնիք հաւատոյ»-ի համանականությունն էնքնութեան և անապականութեան մարմնութեան մարմնութեան» երկում²⁴ և դրամից էլ առաջ՝ «Կնիք հաւատոյ»-ում²⁵. Վերջինում՝ որ եկն բառերի փոխարեն գտնում ենք «ուրեմն» բառը, բայց կարելի է անտարակուսելի համարել, որ «Կնիք հաւատոյ»-ի համանականությունն էնքնութեան և անապականութեան մարմնութեան մարմնութեան» երկում²⁶ և դրամից էլ առաջ՝ «Կնիք հաւատոյ»-ում²⁷.

Ե մարդոյ գործեաց» խոսքերի²⁸: «Արմատ հաւատոյ»-ի ձևակերպումը նոյնին է հիշյալ երեք աղբյուրների մետ, այն միակ տարբերությամբ, որ Սյունեցին «մի բնութիւն» բառի փոխարեն դրել է «միատրութիւն»: Այս ձևակերպման աղբյուրը, մեր կարծիքով, «Կնիք հաւատոյ»-ն է համբիսանում. Ալգեկցին իրենեւոյ բնագրի մետ զուգակցարար օգտագործել է «Կնիք հաւատոյ»-ն: Բայց նախադասության լրացուցիչ մասում Ալգեկցին մեռանում է «Կնիք հաւատոյ»-ից և ճառ հետևողներից, ինչպես և իրենցան բնագրից, որ սեփական շարադրանորով՝ մեր ոչ կարացեալ կցորդ լինել անըսպականութեան, որը խմբագրումն է իրենեւոյ հուսկուալ խորեց լինել անըսպականութեան, որը խմբագրումն է իրենեւոյ կցորդութիւնը ընդունուած լինել Աստուծոյ, ո՞չ էր կարացեալ կցորդութիւնը ընդունել անապականութեան»²⁹:

Ե կիսահատվածը խմբագրված է իրենեւոյ այս խոսքերից. «Քանզի անտեսանելի և աներեւոյթ եղով անապականութիւնն, ոչինչ մեզ ագուստ առնելք. արդ տեսանելի եղել, զի ըստ ամենայն մասին կը ցորդութիւնը ընդունեւութեան առցորդ զանապականութեան»³⁰:

3. Ի հաւատոյ բանեն Երանոսի Լոկյանայ (sic) եախսկոպոսի.

Անջատեալ են բառք նոցա յԱստուծոյ և ոչ գիտելով զի սորա Բանն Միածինն որ միշտ ընդ մարդութեան միասորեալ և ընդ ամս զանկեալ ընդ իրում ստեղծուածիս: Էջ 342ր:

«Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրությունն այս հատվածը սկզբում է Անջատեալ են բառք նոցա յԱստուծոյ և ոչ գիտելով զորա բանն. Միածին որ բառերով (ձեռ. № 2080, էջ 24ր): Յորդանը նկատում է, որ հատվածի ծագումն անհայտ է³¹, բայց ենթադրում է, որ այն պետք է լինի իրենեւոյ կորած „Պրծ Ճղմիւրուս ծւածոն Յաւան; ուրի պիտեաւ և ուրի պիտեաւ և մարմուն ու մեկնաբանությունն է «զմարդն միատրեցոյց ընդ Աստուծոյ և հասարակութեան միաբանութեան Աստուծոյ

²⁰ «Յուցք», էջ 24 տ. 12—18:

²¹ Տես «Գիրք յոլոց», Թիֆլիս, 1901, էջ 296 տ. 36:

²² Արարտ, 1902, էջ 374 տ. 3:

²³ «Կնիք հաւատոյ», էջ 243 տ. 7:

²⁴ «Յուցք», էջ 24 տ. 9—11:

²⁵ Անդ, էջ 24 տ. 11—12:

²⁶ «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 7—9:

²⁷ «Յուցք», էջ 24 տ. 18—17:

²⁸ H. Jordan, S. 162.

²⁹ Ibidem, S. 165.

ենք այսպիս. «որք զմերձուածս գործեն, իբրու զի բափուրը են լԱստուծոյ սիրոյն»³⁰. իսկ այստեղ անմիջապես շարունակվող «Եւ զիրեանց զշան ագտին միայն գիտեն, այլ ոչ զմիութին եկեղեցւոյ»³¹ տողերից մեկնողաբար խմբագրված է «Արմատ հաւատոյ»-ի հատվածի լրացուցիչ մասը, որ է՝ և ոչ զիտեղով...ստեղծուածիւ: Հմտն. նաև «զմիութին Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իր»³²:

4. Նորին.

Զմերձուածն գործեն որ զմեծափառաւրեալ մարմինն Քրիստոսի բաժանեն և հաստակուորեն: Էջ 342թ:

Համառոտ խմբագրությունն ունի՝ Ի Զմերձուածն գործ որ զմեծ և զփառաւրեալ... հաստակուորեն (Ճեռ. № 2080, էջ 24թ):

Քաղիված է «Ընդ. ներձ.» երկի այն հաստվածից, որ մասամբ նշեցինք վերևուս (§3): Սատեղ բերենք ամրողությամբ. «Եւ դատի և որք զմերձուածն գործեն, իբրու զի բափուրը են լԱստուծոյ սիրոյն և զիրեանց զշան ագտին միայն գիտեն, այլ ոչ զմիութին եկեղեցւոյ. և վասն փոքր և դուզնաւրեալ պատճառաց զմեծ և զփառաւր զմարմինն Քրիստոսի բաժանեն և հաստակուորեն»³³:

5. Նորին.

Եսայի ասէ. Մերձեցայ առ կին իմ մարգարէ և ծնաւ որդի՝ Սրբանեկի, Խորիրդակից, Աստուծ հօգար, իշխան՝, քարոզելով զմիութին Բանին սու ի առեղծուածն իր բայտնեկին, քանզի Բանն մարմին եղեւ և Որդին Աստուծոյ՝ որդի մարդոյ: Էջ 342թ:

Հմտն. «Ընդ. ներձ.» երկը. «Եսկ դարձեալ որք ասեմ՝ Եւ մարդ է, և ո՞ ծննից զնա՞», և՝ «Մերձեցայ առ կինն մարգարէ և ծնաւ որդի և կոչի անոն նորա Սրբանեկի, Խորիրդական, Աստուծ հօգար՝, և զայն, որ ի կոսէ՛ Հմանուիլս քարոզելով՝ զմիութին Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իր յաբունեկին, զի Բանն մարմին եղիցի և Որդին Աստուծոյ որդի մարդոյ»³⁴:

Այստեղից է քաղիվածաբար խմբագրված մեր հաստիքը: Սակայն «Արմատ հաւատոյ»-ի կազմողն, իր աղբյուրը խմբագրելիս, ալլափոխել է այն:

Իրենենոր, վկալամոշելով երկու մարգարեների՝ երեմիապին (Ժե՛ 9. «Եւ մարդ է...») և Եսայոն (Ը. 3, Թ. 6 և է. 14. «Եւ

մերձեցայ...»), ասում է, որ նրանք, նախագուշակելով Քրիստոսի գալուստը և նրան «քարոզելով» (նոշակելով) որպես «Հմանուիլ» (Աստված մեզ նետ), «զմիութին Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իր յայտնեին»:

«Արմատ հաւատոյ»-ում Իրենենուի այս բնագրի բերականական ներքին կապակցությունները խախտվել են և առաջացել են նոր կապակցություններ: «Արմատ հաւատոյ»-ի խմբագրը նախ դուր է բողել վկայությունների նեղինակներից առաջին (Երեսիա) և պահել է միայն երկրորդին (Եսայի). որեմն նա ունի ոչ թե երկու ներական, այլ միայն մեկ: Երկրորդ՝ նա «քարոզելով» դերբար զրկել է նրա ուղիղ խոնդից՝ «զայն, որ ի կոսէն» բայկարից և, որպես ուղիղ խոնդիր, նրան տվել է զմիութին Բանին առ ի ստեղծուածն իր բայկարը, այնինչ վերջիններս որպես ուղիղ խոնդիր պատկանում էին «յայտնելին» բային: Այսպիսով՝ «Արմատ հաւատոյ»-ի կազմողի գրչի տակ Իրենենուի այս հատվածի հիմնական մասը բերականորեն ալլափոխել է: Այս աղասիոնան ներկաւորով, բնականաբար, պիտի դուր ընկած լիներ Իրենենուի բնագրում երկու ներականների ստորոգավ համելիսացող «յայտնելին» բայր, բանի որ վերակազմնած հախաղասուրյան մեջ այլևս տեղ չեր մնում նրան: Եվ աւելին՝ նա թյուրիմացարար մնացել է այն-տեղ: Մենք «Արմատ հաւատոյ»-ի բնագրից պեսոք է հանենք՝ այնուղել բերականորեն ոչ մի կապակցության չպատկանող և բացահայտ թյուրիմացություն հանդիսացող յայտնելին բայր:

6. Նորին ասացեալ.

(ա) Անարգեն զմիութին Աստուծոյ և ոզմարմնոյ փրկութիւն որանան և զվերսուին ծնունդ նորա անպատճեն որք ու ասեն զնա լինել ընդունակ անապականորթեան. (բ) քանզի եկն Որդին Աստուծոյ և զգեցաւ մարմին անապական յանապական կոսէն Մարիամայ: Էջ 357թ:

ա կիսահատվածի համար հմմտ. «Ընդ. ներձ.» երկը. «Զամենայի զտնաբեկնութիւնն անարգեն զմարմնոյ փրկութիւն որանան և զվերսուին ծնունդ նորա անպատճեն, ոչ գոյ ընդունական զա սակով անապականորթեան»³⁵: Այս նույնը զրչական աննշան տարբերակներով կա նաև «Կնիք հաւատոյ»-ում³⁶, Կյուրեղ Աղերսանդրացու «Պարապմանց» գրքում³⁷, Սուե-

³⁰ «Ընդ. ներձ.», էջ 111 տ. 2—3:

³¹ Անդ, էջ 111 տ. 3—4:

³² Անդ, էջ 114 տ. 14:

³³ Անդ, էջ 111 տ. 1—5:

³⁴ Անդ, էջ 114 տ. 10—16:

³⁵ Անդ, էջ 155 տ. 11—14:

³⁶ «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 17—19:

³⁷ «Գիրը պարապմանց», Կ. Պոլս, 1717, էջ 458:

իմանու Սյունեցու «Վասն անապականութեան մարմնոյն» երկում³⁸ և Խաչիկ Արշարունու առ Սեբաստիայի մետրապոլիտ պատասխան-թղթում³⁹:

Սակայն «Արմատ հաւատոյ»-ում բերված բնագիրը, որը խմբագրված վիճակ է Եղեկայացնում, հետանում է հիշյալ աղբյուրներից, նրանց թվում և իրենեւոսի բնագրից, և բառացիորեն կապվում Սահակ կաթողիկոսի (Չորափորեցի?) «Բացալայտութիւն» գրվածքի հետ⁴⁰: Այնտեղ է, որ իրենեւոսի «զամենայն զունարէնութիւնն անարգեն զնսուոծոյ» բառերը իտիխարինված են «անարգեն զնրդին Աստուծոյ» բառերով, իսկ «ոչ զոյ ընդունական զաա ասելով» բառերը՝ «որք ոչ ասեն զնա լինել ընդունակ» բառերով: Սահակ կաթողիկոսի մոտ և «Արմատ հաւատոյ»-ում երևացող այս երկու փոփոխություններից առաջինը հիշեց-

³⁸ Արարատ, 1902, էջ 374 տ. 9—12:

³⁹ Տես «Ստեփանոսի Տարօնեցոյ Աստղկան Պատմութիւն տիեզերական», Պետերով, 1885, էջ 222:

⁴⁰ Տես «Գիրք թղթոց», էջ 451 տ. 17—19:

նում է նաև իրենեւոսի «Յոյցք»-ի մի տեղը՝ «զգալուստ զՈրդոյն Աստուծոյ և զունարէնութիւն զմարմնութեանն նորա ամարգեն»⁴¹: «Արմատ հաւատոյ»-ի այս կիսահատվածը եթե Սահակ կաթողիկոսից չի ծագում, ապա նրանք երկուսով ծագում են մի ընդհանոր աղբյուրից, որը մեզ ծանոթ չէ:

Ե կիսահատվածի աղբյուրը հայտնի չէ⁴²: Նրա սկզբի քանզի շաղկապը «Արմատ հաւատոյ»-ի խմբագրի ձեռքից է. իսկ բուն բնագիրը (Եկն... Մարիամայ), գրչական աննշան տարրերություններով գտնվում է նաև «Կնիք հաւատոյ»-ում⁴³ և ուրիշ աղբյուրներում՝ Կյուրել Աղեքսանդրացի⁴⁴, Սահակ կաթողիկոս⁴⁵ և Ստեփանոս Սյունեցի⁴⁶:

⁴¹ «Յոյցք», էջ 68 տ. 15—16:

⁴² Հմատ. H. Jordan, S. 128—131.

⁴³ «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 25—26:

⁴⁴ «Գիրք պարապման», էջ 458:

⁴⁵ Տես «Գիրք թղթոց», էջ 451 տ. 15—16:

⁴⁶ Արարատ, 1902, էջ 374 տ. 18—14:

